

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻԵՌԻԴԱՐԵԱՆՑ, Մակար Տ. վարդապետ.—«Աղւանից երկիր և գրացիք» (Միջին-Դաղստան) քառածալ, 302 էջ, տառ № 12.—  
Թիֆլիս, տար. Շարաձեի, 1893 թ., գինն է 1 ռ.:

Անհերքելի է, որ մեզ հակերիս անհրաժեշտ է որքան կարելի է ճշտորչն և մանրամասն ծանօթանալ ոչ միայն բոհու հայկական երկրի ազն և այն տեղերի հետ, որոնց գաղթել ու ապրում են հակերը կամ մի ժամանակ ապրել են: Աշառունները և թռչունները որջեր և բոխներ հիմնելուց առաջ աշխատում են շրջակակրի մասին ծանօթիքն ունենալ, իմանալ թէ իրանք ինչ նպաստաւոր կամ կրծանիչ պարագաներով են շրջապատւած: Որքան աւելի կարենոր է աղդերին շրջապատող պարագաների հետ ծանօթանալ և ապա դիտակցաբար որոշել իրանց բանելիք ընթացքը Աւրեմն մեր գրականութիւնը անպարագան պիտի ունենալ և աշխատէ ծաղկեցնել ախնագիտ մի ճիւղ, որը կարողանալ ուզիղ գաղափար տալ հաւ ընթերցաներին այն երկիրների մասին, որտեղ կամակ թէ ակամակ ապրում են հակերը:

Այդ երկիրներից մէկն էլ պատմական Աղւանն է, որ բաղկացած է զլիսաւրապէս աշխաման Բագուի և Գանձակի, նահանգներից: Աղւանից երկրի քաղաքների և գիւղերից շատերի մասին մեր պարբերական մամուլի մէջ բաւական նիւթ կաէ հաւաքւած, բայց ամփափ աշխատութիւնները համարեա թէ չը կան, եթէ չը հաշենք քանի մի օտարազգի ճանապարհորդների և ուսումնասիրողների աշխատութիւնները: Ուստի ուսախութեամբ պէտք է ողջունել այն գրողներին, որոնք լիշեալ երկրին վերաբերեալ նիւթերը ամփակելու փորձեր են անում, կամ աշխատում են նոյն նպաստակով ինքնուրովն նիւթեր ժողովել: Համանման ամփախութիւններից մի նորագոյնն էլ կարելի է համարել վերագիշեալ գիրքը:

Մակար վարդապետի աշխատութիւնը կարող է տեղ բռնել մեր գրականութեան մէջ և ծառապել իր-

րմ մի ձեռնարկ ապագալ հետազօտողների համար Հեղինակը ճանապարհորդելով Աղաւանի գիւղերում և քաղաքներում, կարողացել է փոքրի շատէ կարևոր տեղեկութիւններ հաւաքել հալ ազգաբնակութեան մասին, եկեղեցիների, վանքերի, աւերակների զանազան հին լինութիւնների մասին, նորնպէս քիչ չեն այդ գրքի մէջ տեղեկութիւններ գերեզմանների և եկեղեցիների դռների արձանագրութիւնների վերաբերեաւ, Հնադիտական նիւթերի մէջ հեղինակը երբեմն արտազալտում է ցանկալի աշխող և եռանդ, որ շատ ուրախալի է:

Սակայն չէ կարելի չը բողոքել հայր Բարխուդարեանի գրքի մի շարք խոշոր թերութիւնների դէմ, որոնց վերաբ կարճ կերպով մատնացոց կանենք:

Նրեք հարիւր երեսանոց գրքի մէջ ոչ մի սիստեմատիկական կազմութիւն չը կալ, այլ նիւթերը թափած են խառնիխուռն, Մասիսեանի խանութիւնման ամեն տեսակ ապրանքներ կան նորա մէջ, միան նոցանից շատերը ոչ մի բանի պէտք չեն, իսկ առանսարակ ապրանքները դասաւրած, շարած չեն համապատասխան տեղերում, այլ թափած են, որտեղ պատահած է: Օրինակ հեղինակի ասելով նորա նպատակն է եղել հետազօտել Աղաւանից երկիրը, որ կետու կարողանակ գրել նոյն երկրի պատմութիւնը, Ուասի թնչ կարիք կար մի ամբողջ գործի նկրել Դաղստանի նախնին մալրաքաքաք Ղունիբին աննպատակ պատմելով, թէ ինչպէս քաջ է եղել Շա-

միլը, ինչ պատերազմական հնարներ են գործադրել նորա զէմ ուսւզօրապիտները ու թէ ինչպէս զեռմում է այն քարն, որի վերաբ նստած՝ ուսւզ զօրաց հրամանաւար Բարիատինակին՝ ընդունած է Եկիմը և դրկած Պետերբուրգ հանդերձ գերդաստանով, Ալդ ըռլորը թնչ նշանակութիւն ունի Աղւանից երկրի կամ նորա պատմութեան համար, Կամ դուք աեսնում էք, որ մի գիւղի մասին խօսելով հեղինակը նախ տեղեկութիւն է տալիս կլիմակի, օդի, ջրի մասին և ապա եկեղեցով, դպրոցի և քահանակի մասին, իսկ մի ուրիշ գիւղի նկարագրութեան մէջ նախ եկեղեցին է մէջ բերում և իւսուկ օդը, կլիման, ջուրը, իսկ մի երրորդ գիւղի կամ քաղաքի օդի, կլիմակի, ջրի մասին ոչ մի խօսք չէ ասում, որպէս թէ աշնտեղ ոչ օդ կալ, ոչ կլիմակի, ոչ ջուրը, Ուրիշ օրինակ, «Բարահաննքեր» վերնագիր ունեցող դլսի մէջ նկարագրած են և աղահանքերը և հրաբուզիները և հաճքային ջերմուկները, միթէ ալդ բոլորը քարահանքեր են: Մի անդ Մարդասիրական ընկերութեան մասին տեղեկութիւն տալով նա անցնում է օրհնելու նորա վիշտակը, թնչ օրհնութիւնների և աղօթքների տեղ է:

Հեղինակի արած գիտողութիւններից շատ շատերը ալնքան թողլ են, աննշան են, կիսատ ու պրատ են, որ մարդ կարծում է թէ ալդ բոլորը վերցրած են զանազան հին ու նոր պատաղքերից, կամ ուրիշ հետաղոտների աշխատութիւններից և ալն, Օրինակ հեղինակը զտել

է, որ ռակասպից ծովի թռոները և ծռոները սիրող պատաւ տատի պէս ընդունում և խւր գորովագութ ծոցում ձեւացնում է շատ զետեր (խակուրիչ ծովերը բնչչէս են անում): Ծափ ունի շատ հին և նոր անուններ Գարնան, ամրան և աշնան եղանակներում պատահում է (պատահում է), որ հանդարտ է լինում ծովա Պալճառ երկնքի պէս զեղածիծաղ և գուրենկան է լինում խւր երեսթն. խակ խւր երեսն՝ ասես թէ մեծատարած ջլնջ հափելի է, որի մէջ ցերեկները լողում է արեգակն (երսի ուրիշ ծովերում արեգակը գիշերն է լողում), խակ պարզ գիշերներն՝ արծաթափալլ լուսին և պապզուն աստղերը. խաղաղ երթենեկում են շոգենաւերն, առազատատառներն և նաւակներն թողլով իրանց ետեից ծիր կաթին նման նախշուն գոտի ջրի երեսին: Սական երեքմունքներն իրացանների ձաներից զարթնած և բարկութիւնից կատաղած առիւծի նման մռնչում, գոռոսմ և զոյզում է ահեղ ձաւնվի լարուցանում անսաստ ալիքներ, ստեղծում ջրալին լեռներ և ձորեր, լեռնակներ և ձորակներ, բանում սոսկալլ վիճեր և անարկու փոսեր և ազնն և ալլնո... (Կարող ենք հաւատացնել հեղինակին, որ բոլոր ծովերն էլ հէնց արդար պատահէս են): Ազդքուրը գրքի նպատակի համար շատ չնշին նշանակութիւն ունի:

Գրքի մէջ շատ են պատահում կատարելապէս սխալ կամ բաւական անորոշ զիտողութիւններ, որոնք կրկին ապացուցանում են որ հեղինակը բաւական անհոգ կերպով է

մշակում, կամ խակի չէ մշակում հաւաքած նիւթերը, Շամախիքաղաքի (ոչ գաւառի) մասին հեղինակը գտնում է, որ նա ունի պաւական գինի, և առաջին տեղն է տալիս ալիք բերքին, մինչդեռ խսկապէս Շամախիին (գիւղերը չենք ասում) շատ չնշին քանակութեամբ դինի է արտադրում, ալճ էլ ամենահասարակ գինի է, ճանաչւած: Մարդասիրական ընկերութեան գրադարանը, ըստ մեր հեղինակի, ունի բազմաթիւ գաղղիերէն գրքեր, մինչդեռ նա խսկապէս բացի ուսւերէնից և հակերէնից օտարազգի լեզով և ոչ մի հատ գիրք չունի: Վարդապետը ամիսներ է անցուցել Բագուի մէջ և ալդպիսի սխալ տեղեկութիւն է տալիս: «Բագու» զլիի մէջ գանում ենք որ «պարսիկներն, որք բնակում են բերդում և քաղաքիս հարաւակին կողմում, բոլորովին անկարգ և խառն ի խուռն շինած են իրանց բնակարանները և խանութները: Բարեկարգ և գեղեցիկ շինած են հալոց տները, խանութները և իջնանները»: Ազգասիրական եռանդը դրդել է հեղինակին ապացան անձիշդ լինել: Նախ որ բերդումը բնակուամ են խառն ի խուռն ոչ միան պարսիկներ (խսկապէս թուրքեր), ալլ և հավերս Նրկորդ՝ թուրքերը բնակում են ոչ միան հարաւում, ալլ և հիւախում և հէնց քաղաքի կենտրոնական մասերումն էլ: Նրբորդ՝ հարաւում բնակուամ են նունակէս հափերը, որոնք շատ էլ սակաւթիւ չեն: Չորրորդ՝ հափերն էլ ունեն բազմաթիւ խառն ի խուռն շինած բնակարաններ և սորա հա-

կառակ քիչ չեն այն թուրքերը, որոնք ունեն «բարեկարգ և գեղեցիկ շինւած տներ, խանութներ և իջևաններ», Բալախանի գիւղի մասին աւած է թէ «ամրան վնասակար է օդն, զի գիւղն շրջապատւած է լեռներով», Նախ որ Բալախանին միայն մի կողմից լեռներ ունի, երկու կողմերը ամենասովորական բարձրավանդակներ են, իսկ չորրորդ կողմում ալդ էլ չը կալ Երկրորդ, չը գիտենք թէ ինչով է ապացուցանում հեղինակը լիշեալ գիւղի օդի վնասակար լինելը, որովհետև ալդ մասին ոչ մի փաստ չէ բերած. Շամախեցիների զբաղմունքի մասին աւած է միայն թէ «ժողովուրդն զբաղւած է վաճառականութեամբ և ամեն տեսակ արեւստներով»: Հէնց բոլոր քաղաքների մասին էլ նոյնը կարելի է կրկնել. Երկրադնդի որ քաղաքն է որ վաճառականներ և արհեստատրներ չունենալ, Բայց հարցն այն է, թէ ալս ինչ քաղաքում ինչ տեսակ վաճառականութիւն կալ, որ արհեստը որքան է ծաղկած, ինչ է արտահանում և ներմուծում քաղաքը. Բայց համանձան հարցերին հ. Բարխուդարեան ոչինչ ուշադրութիւն չէ դարձել, մինչդեռ օրինակ Շամախում նա տարիներով ապրել է, որպէս քարոզիչ. Նոյնքան և գուցէ ես առաւել անորոշ են և գրքի մէջ հաւաքած ստատիստիկական տեղեկութիւնները. Օրինակ հեղինակը ասում է, որ Շամախում տարեկան լինում է 85 ար. և 69 իգ. ծնունդ. 25 պատկ (5 ալրի ընդ ալրուղ), 31 ար. և 27 իգ. ննջեցեալ. ամենաերկար ապրողի կեանքը չէ աւելանում

90 տարուց (իսկ մենք տեսել ենք հարիւրից աւելի ունեցողներ), Գուցէ մի որ և է տարին ալզպէս եղած լինի, բայց որ տարեկան օրինակ անպատճառ ծ «ալրի ընդ ալրուղ» պատկ է լինում, ալդ պարզ անմտութիւն է: Ստատիստիկական տեղեկութիւնները անկասկած օգտակար են, բայց ստատիստիկան նոյնպէս իւր որոշ կանոնները և օրէնքներն ունի, իսկ ամեն մի թւահաւաքութիւն չէ կարելի ստատիստիկա համարել. Աննպատճակ են նոյնպէս հեղինակի բերած աշնպիսի պատճական տեղեկութիւնները, որոնք կամ պարզ սիսալ են, կամ ոչինչ հաւանականութիւն չունին, Օրինակ թէ Շամախում 1669 թւին մի երկրաշարժից սպանուած են ութ հազար մարդիկ. Ամենահաւանականն այն է, որ մինչև 19-երրորդ դարը Շամախին երբեք 8000 բնակիչ չէ ունեցել իսկ մեր գարում, երբ Շամախին 10—20 հազար բնակիչ ունի, ամենասաստիկ երկրաշարժները սպանել են 100—200 մարդիկ:

Հեղինակը փորձել է տեղ տեղ փիլստիվական և հրապարակախօսական դատողութիւններ անել, բայց շատ անլաջող կերպով, Դադստանում մի լեզզի աստիճանաւոր սիրով է վարել հեղինակի հետ և ահա սորանից փիլստիվակ-ճանապարհորդը եղրակացնում է, որ հալկական արիւնը ժառանգաբար մնացած լինելով լեզզու երակների մէջ, ագժուդրում է նորան գրկել և. Բարխուդարեանին, հետևապէս լիշեալ լիզգին հալ պապերից պիտի լառաջացած լինի. Խնչ փաստեր և ինչ ա-

պացոլցներու կարծում ենք որ համանման թիւր վարդապետութիւններու ազգերը չեն վերականգնում, կամ թէ նկատելով որ Պետրոսիկ քաջագում պատահում են 50 տարեկան ամռորի հայ երիտասարդներ և 40 տարեկան օրիորդներ, հեղինակը աւելացնում է, թէ «աստեղ ևս ներգործած է մի ազգակործած ազգեցութիւն—չամուսնան ան ալու մոդանու» Ազգ երևոլթի մասին արժէ հարց դնել հրապարակախոսական մամուլի մէջ և քննել նորան, բաց մի գլուխ նորան մողա համարել չէ կարելի, որովհետեւ չամուսնանալու կամ ուշ ամուսնանալու երևոլթը գըլխաւորապէս հիմնաւոր տնտեսական և բարուական պատճառներ ունի և ոչ թէ մողա է:

Հեղինակի լեզուն անտանելի է. սա ներկայացնում է մի անշնորհ խառնուրդ զրաբառի, աշխարհաբառի և զանազան բարբառների և ալլպիսով զժարացնում է ընթերցանութիւնը, Ուը բաւական ճռումաքանակն է, աւելորդ դոլականներ, ածականներ ամեն քալակիլսում լիքն են.

Երեխի հենց ճարտարակեզրութեան արդինք են հեղինակի երկու լաւաջարանները, որոնց մէջ Հ. Բարխուդարեանց աշխատի խոստումներ է անում, որ մարդ մտածում է թէ ահա վերջապէս Աղւանին էլ իւր Ալիշանը ունեցաւ, բաց գիրքը ուշադրութեամբ կարդալուց վեա գալիս էք ան եղրակացութեան, որ խոստումները չափազանց են, «Աւրդաւ նկարագրեցի — ասում է նոր Ալիշանը—լեռները և լեռնակ-

ները, դաշտերը և դաշտակները, գետերը և գետակները, ծովը ու լճակները, անտառները և մայառները, եղնագները և շամբերը և մրանգամակն բոլոր ծառերի և թփերի տեսակների անունները՝ լականէ լանւանէ (?)». Բնական նկարագրութեանց շարքում նշանակեցի նաև ոսկու և արծաթի, պղնձի և կապարի, աղանանքի և լեսնաքարի, ջերմուկների և նաւթահանքերի և քարահանքերի, սուրբ և անսուրբ կենդաննեաց և թռչող, գաղանաց և սողնոց (աղդ մասին դրականապէս ոչինչ չկատ գրքի մէջ) տեսակների անունները և գտնւած տեղերը, կարգաւ նշանակեցի ամբողջ ցեղերի.... Բայց բաւական է ընթերցողին ճանձրացնել անվերջ խոստումներով, որոնց տամներորդ մասն էլ չենք գտնում գրքի մէջ, «Այրկասիրութիւնս իրեն մի ծովէն չունչ—ասում է Հ. Բարխուդարեանը—նկիրելով հայ գրականութեան և իրեն ոհեականութեամբ հայ պատմութեան՝ մնամ ամենախոնարհ ծառակը և ազն, իսկ մենք գտնում ենք որ Մակար վարդապետի գիրքը ոչ ծաղկեփունջ է և ոչ ամենակարենոր նիւթ, ազ մի ամենահասարակ ժողովածու է, որի մէջ թէն օգտակար տեղեկութիւններ կան, բաց որը առնասարակ բաւական թուլ և անհոգ աշխատութիւն է».

Աւելորդ չի լինի ի վերջու մի կողմնակի նկատողութիւնն էլ անել Գիրքը հրատարակել է լալտնի բարեգործ Ալիշանց, Եւ ահա հեղինակը իւր աշխատութիւնը նկիրում է հրատարակչի ապնիւ ծնողաց թովմասի և Աննալի վշատակին, որ-

պէս զի իրբն խօսուն արձան լաւէքր-  
ժանան նոցա անմահ վիշտակն հաչ  
գրականութեան մէջ և հաչ ընթեր-  
ցողաց և բանասիրաց վիշտութեանց  
մէջու ։ Նատ կարելի է որ վիշտալ  
հանգուցեալները աղնիս մարդիք են  
եղել, մենք սորա դէմ ոչինչ չունենք:  
բաց ախր ինչ երախտապարտու-

թիւն ունեն դէպի նոցա հաչ գրա-  
կանութիւնը, ընթերցողը և բանա-  
սէրը Պ. Ավագանը հրատարակում  
է հակերէն գրքեր. Հնորհակալ ենք  
մեծապէս Բաց մենք ինչ դործ ու-  
նենք նորա նախնիների հետ, որոնց  
կատարելապէս անծանօթ ենք:  
Ս. Թ.

BOURGET, Paul. — „La terre promise“ Edit. Alphonse Lemer-  
re, Պարիզ, դինն է 3 ֆր. 50 կ.:

Ֆրանսիական վիպադրութիւնը  
անընդհատ ճոխանում է նորանոր  
վէպերով: Սոցա շարքում փալում  
են նամանաամանդ նոքա, որոնց հե-  
ղինակները իրանց նպատակ են  
դրել մարդկանց ողեկան կեանքի  
երանութեները ուսումնասիրել և վեր-  
լուծել. Այս ուղղութեան ամենաա-  
խոշոր ներկազգուցիչը հանդիսա-  
նում է ֆրանսիական վիպադրու-  
թեան մէջ Պոլ Բուրժէն, որ հետդ-  
հետէ իւր նոր վէպերով դրաւում է  
ժամանակակից եւրոպական գրակա-  
նութեան ուշադրութիւնը:

Պոլ Բուրժէն իւր վէպերի մէջ  
չի բարուցանում միշտ նոր խնդիր-  
ներ. Նա չօշափում է շատ անդամ  
ախոխսի արդէն լավանի հասարա-  
կական խնդիրներ, որոնք դեռ ևս  
սպասում են հասարակութեան վըծ-  
ուին, բաց որոնք բովանդակում են  
իրանց մէջ մի բարդ ողեկան կեանք:  
Այս կեանքի ուսումնասիրութիւնը  
և վերլուծումը ունեն անկասկած

նշանակութիւն մեր բարուկան աշ-  
խարի վերանորոգման համար:

Պոլ Բուրժէն „La terre promise“  
վէպի նկաթը կազմում է ավապէս ան-  
ւանւած երեխակի իրաւունքը, թէ  
հասարակական և թէ բարուկան  
տեսակէտից երեխան իրաւունք ու-  
նի իւր խսկական հօրը որոնելու նոյն-  
պէս հակը պարտաւոր է իւր արինի  
արդիւնքը ճանաչելու: Եւ ոչ ոք չէ  
կարող ժխտել, որ այս պահանջը  
միանդաման արդարացի է: Բայց  
չը նաև բարուկականութեան այս  
վեհ պահանջնն, մարդիկ կան, որոնք  
խոս են տալիս իրանց նկրական  
պարտաւորութիւնից, Պարսաւմի և  
դատապարտելի է այն միտքը, որ  
գիտակցաբար աշխատում է արհա-  
մարել այն էակին, որի գոլութեան  
պատճառը ինքն է եղել իսկ ինչ  
կամեք այն խեղճ մարդու մասին,  
որին իւր նախկին մոռացած մեղ-  
քերի հետևանքները համառում են  
իւր գիտակցութեանը միան այն